Յունիսի 23-ին Իջեանի ղեկավարարկի երկարամյա տնօրեն Մեխակ Սայադյանին եւ ղեկավարարկի 4 աշխատողներին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լեւոն Տեր-Սիմոնյանը կանչել է Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղ՝ իր գրասենյակ: Մեխակ Սայադյանը համոզված է՝ իրենց կանչելու նպատակն այն է, որ ցանկանում են լուծարել ավելի քան 60 տարվա տարեգրություն ունեցող, Սայադյան ընտանիքի 3 սերունդների ջանքերով ստեղծված ղեկավարարկը: Դեղորայքարկի լուծարելու պատճառն այն է, որ արգելոցապարկային համալիրի տնօրինությունը եւ շրջակա միջավայրի նախարար Յակոբ Սիմոնյանը վախենում են հաշվարկել, արձանագրել Իջեանի գիւղու, կոնյակի գործարանի կողմից Իջեանի ղեկավարարկին պատճառված շուրջ 4 միլիոն դոլարի վնասը: Ավելին՝ գործարանի կողմից ղեկավարարկին այդքան մեծ վնասներ տալուց հետո՝ 2023թ. փետրվարի 2-ին, «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն (այժմ նախկին) Լեւոն Գաբրիելյանի եւ Իջեանի գիւղու, կոնյակի գործարանի միջեւ կնքվել է վարձակալության պայմանագիր. 5,7 հա տարածքը, որը ղեկավարարկի մաս է, հատկացվել է գիւղու, կոնյակի գործարանին՝ հանգստի գոտու վերածելու նպատակով: 2023թ. ապրիլի 14-ին Իջեանի ղեկավարարկի տնօրեն Մեխակ Սայադյանը Լ. Տեր-Սիմոնյանին գեկուցագրով հայտնել է, որ Տավուշի մարզային քննչական վարչությունում քննվող թիվ 38164721 քրեական վարչությունը նշանակվել են համապատասխան փորձաքննություններ, որոնց ընթացքում արգելվում է իրականացնել չորացած ծառերի եւ թփերի հատումը, հանումը եւ հեռացումը: Վերոհիշյալ քրեական գործով նշանակված փորձաքննություններով պետք է ճշտվեն Իջեանի գիւղու, կոնյակի գործարանի կողմից Աղստե գետի հունում ապրիլի շինարարության, Իջեանի ղեկավարարկի ջրառը ջրագրելու հետեւանքով ղեկավարարկին հասցված վնասները, սակայն այդ փորձաքննությունները չեն անցկացվում: Իջեանի գիւղու, կոնյակի գործարանի կողմից Աղստե գետի հունում կատարված ապրիլի մեծածավալ շինարարության հետեւանքով ավելի քան երկու տարի առաջ ղեկավարարկի ջրառը գրկվել է Աղստեի ինքնահոս ջրից: Դեղորայքարկի ջրառը վերագործարկելու համար պահանջվեց երկու տարի եւ յոթ ամիս, որի ընթացքում ղեկավարարկում չորացան շուրջ 1500 հազվագյուտ, արժեքավոր ծառեր, թփեր եւ մոտ 24 հազար տնկի: Իջեանի գիւղու, կոնյակի գործարանը, Աղստեի աջ ափին պատկանող, ղեկավարարկի ջրառն այժմ վերագործարկել է: Աղստե գետի մաս հանդիսացող ջրային հողն առանց 33 ջրային կոմիտեի եզրակացության վարձակալությանը Իջեանի գիւղու, կոնյակի գործարանին հանձնելու եւ գործարանի կողմից ապրիլի շինարարություն կատարելու դեպքի առթիվ 2021թ. հոկտեմբերի 15-ին, 33 քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով, քրեական վարչություն է նախաձեռնվել, սակայն նախաքննությանը մինչ այժմ որեւէ մեկի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված չէ: Իջեանի գիւղու, կոնյակի գործարանն առանց շինթուղիության հեռապատկանողները համար 2021թ. մարտի 29-ին սուզանվել է 200 հազար դրամի չափով: Գործարանը շարունակել է անօրինական կառուցապատումը եւ 2021թ. հուլիսի 14-ին երկրորդ անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ 2 միլիոն 500 հազար դրամի չափով:

ՈՍԿԱՆ ՍՈՐԳՅԱՆ Տավուշ

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՄՐՑՈՒՅԹ՝ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՐԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաք Սվաջյանը հանդիպումներ է ունեցել Քեղարհունիի եւ Կոսայի մարզերի հանրակրթական դպրոցների ճեմարանների հետ, որոնց ընթացքում ֆինանսավորվել են, 2023 թվականի հունվարից ուժի մեջ մտած «Հանրակրթական մասին» ՀՀ օրենքի փոփոխություններով դրայմանավորված, դպրոցների կառավարման նոր մոդելի կիրառմանն առնչվող հարցեր:



Քննարկումներին մասնակցել են նաեւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Վահրամ Գասպարյանը, հանրակրթության վարչության պետի պարտականությունները կատարող Սուսաննա Ազատյանը: Խոսելով դպրոցների կառավարման նոր համակարգի մասին՝ Արաք Սվաջյանը նշել է, որ, ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման նոր մոդելի, դպրոցները կառավարվելու են կրթական եւ վարչական գործառնություններով: Կրթության որակի ապահովման գործառնությունն ամբողջովին վերապահվում է տնօրենին, իսկ վարչական կառավարումը՝ համակարգող տնօրենին: Վարչական կառավարման մեջ ներառվում է հաշվապահությունը, գնումների գործընթացը, սննդի եւ մաքրության կազմակերպումը, անվտանգության ապահովումը, ընթացիկ տեխնիկական սպասարկումը: Այնուհետ նախարարի տեղակալն անդրադարձել է հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի հավակնորդների կողմից ներկայացվող զարգացման ծրագրերի մշակմանն ու բովանդակությանը, դրանց իրագործելի լինելուն: Նախարարի տեղակալը նաեւ խոսել է ուսումնական հաստատություններում դասավանդող միջին մասնագիտական որակավորմամբ ուսուցիչների ատեստավորման մասին: «Այն ուսուցիչները, որոնք չեն մասնակցի կամավոր ատեստավորմանը, նրանց մասնագիտական գործունեությունը 2023 թվականի օգոստոսի 20-ից հետո դադարեցվելու է, եթե մինչեւ այդ

չեն ապահովում ուսուցչին ներկայացվող պահանջները: Նշված կարգավորումը չի տարածվի միջին մասնագիտական կրթությամբ այն ուսուցիչների վրա, որոնք կմասնակցեն կամավոր ատեստավորմանը եւ կապահովեն նվազագույնը 60 տոկոս արդյունք: 60-69 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում ուսուցիչները կհամարվեն ատեստավորված՝ առանց հավելավճարի հատկացման եւ դրույքաչափի փոփոխության: 70-100 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում ուսուցչի դրույքաչափը կբարձրացվի, եւ կտրվի համապատասխան տոկոսի չափով հավելավճար», - նշել է Արաք Սվաջյանը:

Անդրադարձ է եղել «300 դպրոց եւ 500 մանկապարտեզ» ծրագրին, դպրոցներում իրականացվող բարեգործական ծրագրերի հասցեականությանը, կրթահամալիրների հիմնմանը եւ դրանց արդյունավետությանը: Քննարկվել են նաեւ դասարանների կազմավորման կարգին, դպրոցների ֆինանսավորման նոր մոդելի ներդրմանը, հաջորդ ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքներին եւ օրենսդրական փոփոխությունների կիրառմանը վերաբերող հարցեր: Նախարարության ներկայացուցիչները պատասխանել են տնօրենների կողմից բարձրացված հարցերին:

ՏՎԱԿԱՆՆԵՐ

ՆՎԵՐ՝ ԲԳԽ ՆԱԽԱԳԱՐԻՆ

2022 թվականի հոկտեմբերի 7-ին ԲԳԽ անդամների կողմից Կարեն Անդրեասյանը ընտրվել է Բարձրագույն դասական խորհրդի նախագահ: Մարդու իրավունքների նախկին դաւաճանը, որը դաւաճոն սահմանելուց առաջ ասում էր, որ իրեն դեռական աւաճանի մարդ չի համարում, այսօր դասական սայանում ԲԳԽ խորհրդի նախագահի դաւաճոն է զբաղեցնում: ԲԳ-ական Կարեն Անդրեասյանը 2022 թվականի անձի եկամուտների, ծախսերի եւ անհատի տարեկան հայտարարագրում ներկայացրել է երեք բնակարան՝ մեկ բազմաբնակարան շենքում, երկու անհատական բնակելի տուն:

300 դոլարով: Կարեն Անդրեասյանը հայտարարագրել է չորս միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող մեկ գույք՝ 4 միլիոն արժույթամբ թանկարժեք զարդ, որը, ըստ հայտարարագրի, նվիրատվություն է: Անդրեասյանի բանկային դրամական միջոցները տվյալ տարվա վերջում կազմել է 20 հազար 768 դոլար, 706 հազար դրամ, 11 հազար 956 եվրո, 240 հազար եվրո: Կանխիկ դրամական միջոցները ավելացել են 3 միլիոնով՝ դառնալով 4 մլն 500 հազար:

Անդրեասյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 21 մլն 464 հազար դրամ: Անդրեասյանը 17 մլն եկամուտ ստացել է Արդարադատության նախարարությունից՝ որպես աշխատանքի վարձատրություն, իսկ ՀՀ ԲԳԽ աշխատանքավորից՝ 3 մլն 101 հազար դրամ: Կարեն Անդրեասյանը ստացել է նվիրատվություն 12 հազար 580 եվրո: Հիշեցնենք նաեւ, որ Անդրեասյանը ««Էլ Էլ» իրավաբանական ընկերություն» ՍՊԸ-ի 40% բաժնետեր է: Նշենք նաեւ, որ Անդրեասյանը չունի հայտարարագրած տրանսպորտային միջոց, սակայն կիրը՝ Եվա Առաքելյանը, հայտարարագրել է մեկ մեքենա՝ TOYOTA մակնիշի: Նա նաեւ ստացել է նվիրատվություն բաժնեմաս Գրիգոր Սինայանից, որը 2022 թ. դեկտեմբերի 26-ից Արդարադատության նախարար է: Կնոջ դրամական միջոցները տարեկան չին կազմել են 957 հազար դրամ եւ 6 եվրո, իսկ կանխիկ դրամական միջոցները կազմել են 3 մլն դրամ: Եվա Առաքելյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 12 մլն 499 հազար դրամ:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 16 ՃՏՊ. 27 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՔԱՐՏԵԶ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱԹԱՅՈՎ

«Հրուշակագործների համահայկական միավորում» հասարակական կազմակերպությունը հունիսի 23-ին կազմակերպել էր միավորման գործունեության սկիզբը ազդարարող միջոցառում: Միջոցառման ընթացքում հայկական ավանդական գաթաներով պատրաստվեց Հայաստանի Հանրապետության և Արցախի քարտեզի մակետը: Ներկայացվեցին նաև Հայաստանի մարզերի ավանդական գաթաները:

Armlur.am-ը գրուցեց ArMaR Հրուշակագործության արվեստի ակադեմիայի տնօրեն, «Հրուշակագործների համահայկական միավորում» հասարակական կազմակերպության նախագահ Արփինե Խաչատրյանի հետ: «Գաթան ընտրվել է որպես հին հայկական ավանդական քաղցրավենիք, և հենց դրա միջոցով ցույց ենք տալիս մեր միասնությունը, եռամիասնության ուժն ու հաղթական ոգին», - նշեց նա:

Հրուշակագործների համահայկական միավորման նպատակը Հայաստանը Արցախից չտարանջատելն ու միավորելն է: Քարտեզի վրա առաջինը տեղադրվեց Սյունիքի մարզի գաթան՝ որպես երկրի ամուր դարպասներ: «Առաջարկում եմ, որ Երեւանի գաթան տեղադրելուց առաջ տեղադրենք Արցախին, որովհետեւ առանց Արցախ չի կարող լինել Երեւան», -ասաց Արփինե Խաչատրյանը:

Նշեց, որ միջոցառմանը ներկա էին հրուշակագործներ Հայաստանի բոլոր մարզերից, Սփյուռքից և Արցախից տեղահանված հրուշակագործներ:

ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԳԻՏԱՐԿՈՒՄ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից հանրապետության տարածքում անցկացվել էր երկրում արտադրվող և ներմուծվող պաղպաղակ արտադրատեսակի դիտարկում և հսկիչ գնում:

ՍԱՏՄ-ից հայտնում են, որ «Փինք Բերրի» ՍՊԸ-ի կողմից արտադրվող պլոմբիր տեսակի «Վանիլային պաղպաղակ թխվածքաբլիթով» և «Պաղպաղակ քոթոթ» արտադրատեսակների նմուշներում հայտնաբերվել էր կաթնայնուղի փոխարինիչ:

Հետազոտվելուց հետո տեսչական մարմնի Կոտայքի մարզային կենտրոնի տեսուչները վերահսկողական միջոցառում են իրականացրել «Փինք Բերրի» ՍՊԸ-ում:

Քանի որ նշված արտադրատեսակները պատրաստվում են թխվածքաբլիթի փշուրներով, որոնց բաղադրության մեջ առկա է կաթնայնուղի փոխարինիչ, նմուշառումն իրականացվել է պաղպաղակի խառնուրդից մինչև թխվածքաբլիթի փշուրների ավելացումը:

Փորձաքննության արդյունքում պաղպաղակի խառնուրդում կաթնայնուղի փոխարինիչ չի հայտնաբերվել:

Այսպիսով, «Փինք Բերրի» ՍՊԸ-ի կողմից արտադրված պլոմբիր տեսակի «Վանիլային պաղպաղակ թխվածքաբլիթով» և «Պաղպաղակ քոթոթ» արտադրատեսակները համապատասխանում են օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Team Telecom Armenia

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ Team Telecom Armenia-ի IPO-Ն ԱԶԳԱՐԱՐՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

22 հունիսի, 2023 թ., Երեւան. Team Telecom Armenia-ն դասփոխված միջոցառմամբ ազդարարեց բաժնեհանձնարարության (IPO) մեկնարկը: Այս ռազմավարական որոշումը ընկերությանը թույլ է տալու ավելի մեծ ներդրումներ անելու ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, ամրադրելու դեռակասարունը շուկայում, խրախուսելու բաց և բազմազան գործելանոցը բիզնես ոլորտում:

8 միլիարդ 240 միլիոն դրամ ընդհանուր արժույթով 40 միլիոն բաժնետոմսի տեղաբաշխումն իրականացնելու է «Ամերիաբանկ»-ը: Տեղաբաշխումից հետո Team Telecom Armenia-ի բաժնետոմսերը կցուցակվեն Հայաստանի արժեթղթերի բորսայում ավելի ամրապնդելով ընկերության տեսանելիությունը և վարկանիշը:

Team Telecom Armenia-ի գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը բացման խոսքում շնորհակալություն հայտնեց բոլոր հյուրերին այդ կարևոր օրն իրենց հետ անցկացնելու և հաջողությունները կիսելու համար: «Առաջնային հրապարակային առաջարկը փաստում է, որ մենք նվիրված ենք թափանցիկ գործելանոցին, աճին ու հեռահաղորդակցության ոլորտի զարգացմանը: IPO-ն ոչ միայն կուժեղացնի մեր ենթակառուցվածքները և ներկայությունը շուկայում, այլև հնարավորություն կտա ներդրողներին միանալու մեզ այս հետաքրքիր ճանապարհորդության ընթացքում: Հայաստանի տեղեկում ոլորտի ապագան այսուհետ ձեռավորելու ենք Team-ի բաժնետերերի հետ միասին»:

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը իր ելույթում անդրադարձավ այն քայլերին, որոնք նախարարությունը իրականացնում է կապիտալի շուկայի զարգացման ու ակտիվացման համար և նշեց. «Team Telecom Armenia-ի կողմից բաժնետոմսերի առաջնային տեղաբաշխման գնալու փաստը շատ կարևոր ազդակ է, որը ցույց է տալիս, որ կապիտալի շուկայի զարգացման ուղղությամբ ձեռնարկված էներգիան աստիճանաբար կապիտալացվում է: Մենք շարունակելու ենք մեր աշխատանքը ներքին պետական պարտքի խորը և իրացվելի շուկայի ձեռավորման ուղղությամբ: Մենք հանձնառու ենք այս գործընթացն իրականացնել այնպես, որ շարունակենք դրական



ազդեցություն ունենալ կորպորատիվ շուկայի զարգացման գործում»:

«Ամերիաբանկ»-ի տնօրինության նախագահ - գլխավոր տնօրեն Արտակ Հանեսյանն իր ելույթում նշեց, որ սա իրապես հանրային տեղաբաշխում է, քանի որ Team-ի բաժնետեր կարող է դառնալ յուրաքանչյուրը օնլայն և ավտոմատացված եղանակով: «Ամերիաբանկ»-ի նախարար մեծ պատիվ է առանցքային դերակատարում ունենալ Team Telecom Armenia-ի բաժնետոմսերի հրապարակային տեղաբաշխման գործընթացում, որն իրապես համարում ենք պատմական իրադարձություն հայկական կապիտալի շուկայի համար: Կարող եմ փաստել, որ ձեռավորվում է ներդրողների բազմազան ղեկավարման ֆիլիալներ և երկար ցանկ, ինչն ակտիվ երկրորդային շուկա ունենալու հիմնական գրավական է»:

Team Telecom Armenia-ի բաժնետոմսերը հասանելի են «Ամերիաբանկ»-ի MyAmerica հավելվածի MyInvest հարթակում, որը ներդրողներին հնարավորություն է տալիս առցանց գնելու բաժնետոմսեր, մշտական հասանելիություն ունենալու ներդրումային պորտֆելին և վերջինիս վերաբերյալ ստանալու մասնաճիւղի տեղեկություն:

Ներգրված միջոցները Team Telecom Armenia-ն ուղղելու է Հայաստանի ողջ տարածքում օպտիկամալերաթելային NGN ցանցի ընդլայնմանը, 5G բջջային ցանցի գործարկմանը և միջազգային նոր կապուղիների ակտիվացմանը: Աշխատելով թվային տեխնոլոգիաների ոլորտում ընկերությունը նաև մեծ ուշադրություն է դարձնելու ժամանակակից

թվային գործիքների ու լուծումների ներդրմանը և այլ հավակնոտ ծրագրերի իրականացմանը:

Պաշտոնական միջոցառմանը ներկա էին ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, Կենտրոնական բանկի փոխնախագահ Արմեն Նուրբեկյանը, Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ և այլ պաշտոնատար անձինք, ինչպես նաև Team Telecom Armenia-ի գործընկերները, պոտենցիալ բաժնետերերն ու թիմակիցները:

Team Telecom Armenia

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային և ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը:

«Ամերիաբանկ» ՓԲԸ

«Ամերիաբանկ»-ը ֆինանսական և տեխնոլոգիական առաջատար հաստատություն է, ՀՀ տնտեսական ոլորտի նշանակալի դերակատարներից մեկը, որի ակտիվները գերազանցում են 1 տրիլիոն ՀՀ դրամը: Ութսունամյակի թվայնացման ճանապարհով՝ բանկը ներդրել է մի շարք նորարար ծրագրեր ու հարթակներ և շարունակում է կատարելագործել դրանք՝ ձեռավորելով մարդու տարատեսակ կարիքների բավարարմանն ուղղված, դինամիկ զարգացող ֆինանսատեխնոլոգիական միջավայր:

ԵԿՐՈՊԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ՄԵԴԱԿԱՆՆԵՐ՝ ՀՐԱՉԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Լեհաստանում ընթացող Եվրոպական խաղերում հունիսի 23-ին «ասճանակ» ձեռի մարզիկներ Բենիկ Խլդաթյանը (289 միավոր) և Էմիլիա Կարադեյանը (292 միավոր) 10մ, 30+30 կրակոց թիմային միջազգային մրցումում, միասին խոցելով 581 միավոր, անցել են եզրափակիչ: Եզրափակչում զիջելով միայն Իսպանիայի թիմին՝ հրաձգեցին դարձել են արծաթե մեդալակիր:

Նախորդ օրը անհատական պայքարում մարզիկները՝ Էլմիրա Կարապետյանը և Բենիկ Խլդաթյանը, չեն կարողացել նվաճել Լեհաստանում մեկնարկած Եվրոպական խաղերի գնդակային հրաձգության մրցաշարի եզրափակիչ փուլի ուղեգիր:

10 մետր օդամիջ ատրճանակ մրցաձեռի որակավորման փուլում Էլմիրա Կարապետյանը վաստակել է 572 միավոր և 38 մասնակցի մեջ զբաղեցրել 12-րդ տեղը:

Նույն մրցաձեռի տղամարդկանց պայքարում Բենիկ Խլդաթյանը որակավորման փուլում 573 միավորով գրանցել է 22-րդ արդյունքը (36 մասնակցի մեջ) և դուրս մնացել հետագա պայքարից:

Եզրափակիչ փուլի ուղեգիր են նվաճել 8 լավագույն արդյունք ցուցադրած մասնակիցները:

Հրաձգության Հայաստանի հավաքականի կազմում մրցավայր է մեկնել նաև Երջանիկ Ավետիսյանը (ստենդային հրաձգություն):

Հիշեցնենք, որ Եվրոպական խաղերի հրաձգության մրցումները վարկանիշային են «Փարիզ-2024» օլիմպիական խաղերի համար: Էլմիրա Կարապետյանն ունի օլիմպիական ուղեգիր, որը նվաճել է 2022 թվականին Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում անցկացված գնդակային հրաձգության աշխարհի առաջնությունում 5-րդ տեղ գրավելու շնորհիվ:

Հայաստանը Եվրոպական երրորդ խաղերին մասնակցում է 57 մարզիկով: Նրանք մասնակցում են խաղերի ծրագրում ընդգրկված 29 մարզաձեռերից 9-ի՝ աթլետիկայի, բռնցքամարտի, թեթևվոդոյի, թեքբոլի, կարատեի, հրաձգության, ջրացատկի, մուայթայի և սուսերամարտի մրցումներին:

«Տողովուրդ» օրաթերթում և Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար գանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅՏ

# ՎԻՇՆԱՊԱՔԱՐԸ՝ ՅՈՒՆԵՍԿՈ-ՈՒՄ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ վերաբաժանում է լրացում է կասարվել 2023 թվականի դեկտեմբերի 23-ին Կառավարության որոշմամբ՝ 4 մլն 494 հազար դրամ ուղղելով ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում Տիրինակատար լեռան վրա գտնվող վիճադաբարների ընդգրկման հայտի դասրասման աշխատանքներին: Այս մասին «Արմենիա»-ին տեղեկացրին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից:



Ըստ ՅՈՒՆԵՍԿՈ-ի ընթացակարգի՝ մինչև համաշխարհային ժառանգության հիմնական ցանկում ընդգրկվելը անհրաժեշտ է, որ օբյեկտն ընդգրկված լինի նախնական ցանկում:

Վերաբաշխումը կնպաստի ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում Տիրինակատար լեռան տարածքում գտնվող վիճադաբարների՝ որպես յուրահատուկ եւ համամարդկային ժառանգության ընդգրկման հայտի պատրաստմանը:

ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության հիմնական ցանկում Հայաստանի Հանրապետությունից գրանցված է 3 հուշարձանախումբ՝ Սանահինի եւ Հադպատի վանական համալիրները, Գեղարդավանքը եւ Ազատ գետի վերին հովիտը, Էջմիածնի Մայր տաճարը, եկեղեցիներն ու Զվարթնոցի տաճարը: Այս բոլոր գրանցումները կատարվել են 1998-2000 թթ., որից հետո Հայաստանի Հանրապետության կողմից որեւէ նոր հուշարձան չի գրանցվել:

ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության նախնական ցանկում (Tentative list) Հայաստանի Հանրապետությունից գրանցված է 4 հուշարձանախումբ՝ Դվին հնավայրը, Նորավանքն ու Ամաղուի ձորահովիտը, Երեւույթի տաճարը, Տաթևի վանական համալիրն ու Տաթևի անապատը: Այս բոլոր գրանցումները կատարվել են 1995 թ.:

Սկսած 2024 թվականից՝ ԿԳՄՍ նախարարությունն առաջիկա Միջնաժամկետ ծախսային ծրագրում նախատեսել է առանձին միջոցառում ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության ցանկերում ավելացվող հուշարձանների հայտերի պատրաստման համար, որի նպատակն է լրացնել ավելի քան 20 տարվա բացը՝ նախատեսելով միջոցներ ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության ցանկում նոր հուշարձանների ընդգրկման համար:

Միջոցները ծախսվելու են հայտերի պատրաստման, հուշարձանների կառավարման պլանների մշակման, թարգմանությունների, գիտական հիմքով բովանդակային հայտի լրացման, փորձագիտական խորհրդատվության եւ այլ ուղղություններով:

Հաշվի առնելով 1972թ. ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության պահպանության կոնվենցիայի գլխավոր ասամբլեայի տարեկան որոշումներն ու հայտերի գրանցման ընթացակարգային փոփոխությունները՝ աշխատանքը կներառի նաեւ կազմված հայտերի շարունակական լրամշակումը վերջնականապես հայտի գրանցմանը հասնելու համար:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՄՈՒԲԻՆՅՈՆ ՀԵՌԱՅԱՎ

Իտալական «Ռոմայի» պորտուգալացի գլխավոր մարզիչ Ժոզե Մուրիլյոն եվրագավաթային չորս խաղով որակագրկվելուց հետո հեռացել է ՈւեֆԱ-ի խորհրդատվական մարմնից: Մուրիլյոն այդ մասին նամակով հայտնել է խմբի ղեկավար Զվոնիմիր Բոբանին:

«Հարգելի՛ պարոն Բոբան, շնորհակալ եմ, որ ինձ հրավիրել էիք խորհուրդ, սակայն ափսոսանքով հայտնում եմ, որ հրաժարվում եմ այդ խմբում իմ անդամակցությունից: Այն պայմանները, որոնց ես հավատում էի խորհրդի կազմում ընդգրկվելիս, այլևս չկան: Ստիպված եմ ընդունել այս որոշումը»,- նամակից մեջբերում է ներկայացրել ANSA-ն:

Մուրիլյոն որակագրկվել էր Եվրոպայի լիգայի եզրափակիչի մրցավար էնթոնի Թեյլորին հայիոյելու համար:

«Ռոման» հետխաղային 11-մետրանոցներով պարտվել էր իսպանական «Սելտիային» (1:1, 11մ՝ 1:4):

## ԸՄԲԵՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՅՏՆԻ Է

Ըմբշամարտի Հայաստանի երիտասարդական հավաքականները հունիսի 26-ից հուլիսի 2-ը Իսպանիայի Սանտիագո դե Կոմպոստելա քաղաքում կմասնակցեն Եվրոպայի երիտասարդական առաջնությանը: ՀԸՖ-ն ներկայացրել է թիմերի կազմերը:

### Ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի երիտասարդական հավաքական

- 57 կգ՝ Հարություն Յուսիպյան
- 61 կգ՝ Լեւիկ Միքայելյան
- 65 կգ՝ Անդրանիկ Ավետիսյան
- 70 կգ՝ Դավիթ Մարգարյան
- 74 կգ՝ Հայկ Պապիկյան
- 79 կգ՝ Նարեկ Գրիգորյան
- 86 կգ՝ Մուշեղ Մկրտչյան
- 92 կգ՝ Կնյազ Իբրյան
- 97 կգ՝ Գուրգեն Սիմոնյան
- Մարզիչներ՝ Ավետիք Վարդանյան, Արմեն Մալխասյան, Հակոբ Ավետիսյան, Կարապետ Ենգոյան:

### Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Հայաստանի երիտասարդական հավաքական

- 55 կգ՝ Հովհաննես Առաքելյան
- 60 կգ՝ Սուրեն Աղաջանյան
- 63 կգ՝ Յուրիկ Յուլյան
- 67 կգ՝ Գասպար Տերտերյան
- 72 կգ՝ Աշոտ Խաչատրյան
- 77 կգ՝ Վահե Յուսիպյան
- 82 կգ՝ Ռուբեն Գեորգյան
- 87 կգ՝ Վիգեն Նազարյան
- 97 կգ՝ Արշակ Գեղամյան
- 130 կգ՝ Արամայիս Հարությունյան
- Մարզիչներ՝ Մովսես Կարապետյան, Արմեն Առաքելյան, Տիգրան Սահակյան, Ժորա Վարդանյան:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՖԻԼՄԵՐ

# «ՖՐԵՍԿՈ» ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Ֆրեսկո» արդի արվեստի եւ հոգեւոր ֆիլմերի 10-րդ միջազգային փառատոնը, որը կմեկնարկի հունիսի 23-ին Վանաձորում, կհյուրընկալի արվեստագետների, կինոգործիչների եւ մտավորականների՝ Լոռու մարզը վերածելով մշակութային խաչմերուկի:




Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակութային պալատի հարակից տարածքում հունիսի 23-ից հունիսի 30-ը տեղի կունենան ֆիլմերի դիտումներ, համերգային ծրագրեր: Ելույթ կունենան «Քարեկամություն» Հայաստանի պարարվեստի պետական համույթը, «Ակունք» ազգագրական համույթը, Վանաձորի «Հորովել» երգի-պարի անսամբլը, «Ֆոլկ մոդերն» անսամբլը եւ այլք: «Արմենարես»-ի հաղորդմամբ՝ հունիսի 22-ին լրագրողների հետ հանդիպմանը ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմայանը վստահություն հայտնեց, որ փառատոնն ապացուցել է իր կենսունակությունը, որովհետեւ այն մարդասիրական արժեքների՝ բարության, հանդուրժողականության, սիրո գաղափարների դրսևորման լավագույն հարթակներից մեկն է: «Երբ կրթության, մշակույթի պետական քաղաքականության մեջ հստակ ձեւակերպված չէր ներառականության քաղաքականությունը, «Ֆրեսկո»-ն վարում էր նման քաղաքականություն: Կարելի էր հանգամանք է այն, որ ներառականությունն այս փառատոնի բրենդն է, եւ «Ֆրեսկո»-ն չի «զարդարվում» այդ բնագավառում կատարած աշխատանքով»,-շեշտեց Խզմայանն ու հավելեց՝ փառատոնի կազմակերպիչներն ամբողջ տարվա ընթացքում սերտ կապ ունեն մանկատների երեխաների, զարգացման առանձնահատկություններ ունեցող պատանիների հետ: Փոխնախարարը հիշեցրեց, որ երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոնը, որն իրականացնում է փառատոնը, նախորդ տարի պետական աջակցությամբ արվեստի դպրոցների, կրթական այլ հաստատությունների ուսուցիչների համար վերապատրաստման դասընթացներ է կազմակերպել, ինչը չափազանց կարելի է, քանի որ կան առանձնահատկություններ, առանց որոնց ներառական կրթությամբ զբաղվելը շատ վտանգավոր է:

● Հունիսի 25-ին Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Չառ» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:



ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչդե՞ս կարող եմ մարդու իրավունքների դաժանումի հետ կապվել:  
Գրիգոր Ստեփանյան (55 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Բողոքը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվում է գրավոր կամ բանավոր կարգով: Գրավոր կարգով ներկայացվող բողոքները քաղաքացին անձամբ կարող է ներկայացնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, ուղարկել փոստային ծառայության միջոցով կամ ներկայացնել առցանց բողոք:

Բողոքի համար որել է հատուկ ձեռնարկված չէ, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմողի անուն-ազգանունը, բնակության վայրը (հասցեն), հեռախոսահամարը կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձեռք, գտնվելու վայրը:

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Բողոքում պետք է նշվեն նաեւ մարդու խախտված կամ խախտվող իրավունքների մասին տեղեկությունները: Եթե դիմողն ունի գործի պարզաբանման եւ լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ապա դրանք կարող են կցվել բողոքին:

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՍԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Անունալուծվելու համար ի՞նչ փաստաթղթեր ունի ներկայացվելու:  
Իզաբելա Արամյան (35 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Եթե անունների միջեւ առկա է անունալուծվելու վերաբերյալ փոխադարձ համաձայնություն, ապա նրանց անունալուծությունը կատարվում է ՔԿԱԳ մարմնում:

Անունալուծության գրանցման համար անունները ՔԿԱԳ մարմին են ներկայացնում համատեղ դիմում: Եթե անուններից մեկը հնարավորություն չունի անձամբ ներկայանալու ՔԿԱԳ մարմին՝ անունալուծության մասին համատեղ դիմում տալու, ապա անունների կամքի արտահայտությունը կարող է ձեռնարկվել անունալուծության մասին առանձին հայտարարություններով: Անունալուծության պետական գրանցման համար ներկայացվում է անձը հաստատող փաստաթուղթ, անունության վկայական (առկայության դեպքում), անունների համատեղ դիմումը՝ ՔԿԱԳ մարմնում անունների միջեւ փոխադարձ համաձայնության առկայության անունալուծություն կատարելու համար, անուններից մեկի դիմումը, եթե մյուսը դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ կամ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով, անունների դիմումը եւ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով անունալուծություն կատարելու դեպքում:

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Անունալուծության գրանցումը եւ անուններից յուրաքանչյուրին անունալուծության վկայականներ տրամադրելը կատարվում է ՔԿԱԳ մարմնի կողմից անունալուծության մասին անունների դիմում տալու օրվանից առնվազն մեկ ամիս հետո, բայց երեք ամսից ոչ ուշ: Անունալուծության պետական գրանցման համար, ներառյալ վկայական տալը, գանձվում է պետական տուրք՝ 10000 ՀՀ դրամ: Անունալուծության պետական գրանցման ժամանակ մինչև անունական ազգանունը կրելու ցանկության դեպքում գանձվում է նաեւ 5000 ՀՀ դրամ պետական տուրք:

ԼՈՒՐ ԿԱՐԴ

Լուսանկարն արվել է Երեւանում



97 համարի երթուղին սպասարկող ավտոբուսը Էրեբունի վարչական շրջանում հայտնվել է քանդված ասֆալտի փոսերից մեկում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը  
Բաժանորդագրվելու  
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ  
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ  
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ  
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ**  
**հայկական տպագիր մամուլից**

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետևյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ \_\_\_\_\_  
Ազգանուն՝ \_\_\_\_\_  
Առաքման հասցե՝ \_\_\_\_\_  
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049  
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+ 5 + 8 +14 + 16	Արարատ	+14 + 16 +21 + 23
Կոտայքի լեռներ	+ 5 + 8 +13 + 16	Արմավիր	+12 + 14 +21 + 23
Կոտայքի նախալեռներ	+12 + 15 +17 + 20	Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +13 + 16
Գեղարքունիք	+ 5 + 9 +13 + 16	Վայոց ձորի նախալեռներ	+14 + 16 +20 + 22
Լոռի	+ 8 + 10 +12 + 15	Սյունիքի հովիտներ	+13 + 16 +20 + 25
Տավուշ	+ 9 + 13 +13 + 16	Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +13 + 16
Արագածոտնի լեռներ	+ 5 + 7 +13 + 15	Արցախ	+13 + 16 +20 + 25
Արագածոտնի նախալեռներ	+11 + 14 +17 + 21	Երեւան	+13 + 15 +18 + 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22<sup>ա</sup>/3, հեռ՝ 010 54-64-23  
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086  
տրված է 24.11.2010  
Ստորագրված է տպագրության 22.6.2023

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում  
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: